

detection risk in audit. For the purpose of minimization of the latter both statistical and non-statistical methods are implemented. Within the framework of the statistical method a key problem is the formation of audit sample.

Զուրաբյան Կ.Ա.

Երևանի պետական համալսարան, տ.գ.թ., դոցենտ
kazurab@mail.ru

ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնաբառեր. վերագնահատում, հիմնական միջոցներ, շահույթ կամ վնաս, այլ համապարփակ ֆինանսական արդյունք, վերագնահատումից արժեքի աճ

Հաճախ կազմակերպության հաշվեկշռային արժեքը մի քանի անգամ զիջում է դրա իրական շուկայական արժեքին, և կազմակերպության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ճիշտ չի արտացոլում տվյալ իրավաբանական անձի իրական ֆինանսական դրությունը, արդյունքում պոտենցիալ ներդրողը չի կարողանում արագ կողմնորոշվել ներդրումներ իրականացնելու վերաբերյալ: Նման իրավիճակներում միջոցների վերագնահատումն անկախ գնահատողի կողմից արդյունավետ լուծում է հանդիսանում:¹

Հիմնական միջոցի միավորը, որի իրական արժեքը հնարավոր է արժանահավատորեն չափել, որպես ակտիվ ճանաչելուց հետո պետք է հաշվառվի վերագնահատված գումարով, որն իրենից ներկայացնում է դրա իրական արժեքը վերագնահատման ամսաթվի դրությամբ՝ հանած համապատասխան կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Վերագնահատումները պետք է կատարվեն բավարար պարբերականությամբ, որպեսզի հաշվեկշռային արժեքն էականորեն չտարբերվի հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ իրական արժեքից:

¹ “Կոստ Կոնսալտ” գնահատման և անշարժ գույքի ընկերություն
http://cost.am/index.php?al=Fixed_assist

Եթե ակտիվների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճն ուղղակիորեն պետք է ճանաչվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում և կուտակվի սեփական կապիտալի վերագնահատումից արժեքի աճի հոդվածում:¹

Տրվում են հետևյալ հաշվապահական ձևակերպումները.

Դտ 111 “Մաշվող հիմնական միջոցներ”

Կտ 6711 “Հիմնական միջոցների վերագնահատումից օգուտներ”

Կուտակված մաշվածության մասով.

Դտ 6711”Հիմնական միջոցների վերագնահատումից օգուտներ”

Կտ 112 “Հիմնական միջոցներին մաշվածություն”

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների սեփական կապիտալի վերագնահատումից արժեքի աճի մասով.

Դտ 6711 “Հիմնական միջոցների վերագնահատումից օգուտներ”

Կտ 3211 “Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճ”

Այնուամենայնիվ, եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվների նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը՝ այն պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում այն չափով, որով նախապես նվազումը ճանաչվել էր շահույթում կամ վնասում:²

Տրվում են հետևյալ հաշվապահական ձևակերպումները.

Դտ 111 “Մաշվող հիմնական միջոցներ”

Կտ 6241 “Հիմնական միջոցների վերագնահատումից օգուտներ”

Կուտակված մաշվածության մասով.

Դտ 6241 “Հիմնական միջոցների վերագնահատումից օգուտներ”

Կտ 112 “Հիմնական միջոցներին մաշվածություն”

Հաշվետու ժամանակաշրջանի վերջում հիմնական միջոցների վերագնահատումից օգուտների դուրս գրումը շահույթին կամ վնասին.

Դտ 6241 “Հիմնական միջոցների վերագնահատումից օգուտներ”

¹ ՀՀՄՍ 16 “Հիմնական միջոցներ” պ.31, 39

² Նույնը պ.39

Կտ 331”Շահույթ կամ վնաս”

Եթե ակտիվների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում:¹

Տրվում են հետևյալ հաշվապահական ձևակերպումները.

Դտ 7241 “Հիմնական միջոցների վերագնահատումից կորուստներ”

Կտ 111 “Մաշվող հիմնական միջոցներ”

Կուտակված մաշվածության մասով.

Դտ 112 “Հիմնական միջոցների մաշվածություն”

Կտ 7241 “Հիմնական միջոցների վերագնահատումից կորուստներ”

Հաշվետու ժամանակաշրջանի վերջում հիմնական միջոցների վերագնահատումից կորուստների դուրս գրումը շահույթին կամ վնասին.

Դտ 331 “Շահույթ կամ վնաս”

Կտ 7241 “Հիմնական միջոցների վերագնահատումից կորուստներ”

Այնուամենայնիվ, նվազումը պետք է ճանաչվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում այն գումարի չափով, որը չի գերազանցում այդ ակտիվների գծով վերագնահատումից արժեքի աճի առկա կրեդիտային մնացորդը:²

Տրվում են հետևյալ հաշվապահական ձևակերպումները.

Դտ 7711 “Հիմնական միջոցների վերագնահատումից կորուստ”

Կտ 111 “Մաշվող հիմնական միջոցներ”

Կուտակված մաշվածության մասով.

Դտ 112 “Հիմնական միջոցների մաշվածություն”

Կտ 7711 “Հիմնական միջոցների վերագնահատումից կորուստ”

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում աճը ճանաչված նվազումը պակասեցնում է սեփական կապիտալի վերագնահատումից արժեքի աճի հոդվածում կուտակված գումարը.


Դտ 3311 “Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճ”

¹ Նույնը պ.40

² ՀՀՄՍ 16 “Հիմնական միջոցներ” պ.40

Կտ 7711 “Հիմնական միջոցների վերագնահատումից կորուստ”¹
 Պարզաբանենք վերը նշվածը գծապատկերի օգնությամբ.

Այլ համապարփակ ֆինանսական արդյունք



Գծապատկեր 1. Հիմնական միջոցի վերագնահատումից աճի և նվազման ճանաչումը Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և Տահույթում կամ վնասում²

Իսկ այժմ ներկայացնենք վերը նշվածը օրինակների հիման վրա:

1. Ենթադրենք ակտիվի առաջին վերագնահատման հետևանքով նրա արժեքն ավելացել է 1000 պ.մ-ով, (պայմանական միավորով): Պետք է տրվեն հետևյալ հաշվապահական գրանցումները՝

Դտ 111 “Մաշվող հիմնական միջոցներ”	1000 պ.մ
Կտ 6711 “Հիմնական միջոցների վերագն. օգուտներ”	1000 պ.մ
Դտ 6711 “Հիմնական միջոցների վերագն. օգուտներ”	1000 պ.մ
Կտ 3211 “Հիմնական միջոցների վերագն. արժեքի աճ”	1000 պ.մ

¹ Հաշվապահական հաշվառում, ՀՈՒՄԿ հիմնադրամ, ուս.ձեռնարկ, Երևան 2012, էջ 71-72

² Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից


Մակայն, երբ այդ նույն ակտիվի արժեքը հաջորդ վերագնահատման արդյունքում նվազում է 2100 պ.մ-ով, այն պետք է դեբետագրվի 7711 “Հիմնական միջոցների վերագնահատումից կորուստներ” հաշվին այն չափով, որքանով որ նախկինում վերագրվել էր կապիտալին, իսկ մնացած մասը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում:

Տրվում են հետևյալ ձևակերպումները՝

Դտ 7711 “Հիմնական միջոցների վերագն.կորուստ”	1000 պ.մ
Դտ 7241 “Հիմնական միջոցների վերագն.կորուստներ”	1100 պ.մ
Կտ 111 “Մաշվող հիմնական միջոցներ”	2100 պ.մ
Դտ 3211 “Հիմնական միջոցների վերագն.արժեքի աճ”	1000 պ.մ
Կտ 7711 “Հիմնական միջոցների վերագն.կորուստ”	1000 պ.մ
Դտ 331 “Շահույթ կամ վնաս”	1100 պ.մ
Կտ 7241 “Հիմնական միջոցների վերագն.կորուստներ”	1100 պ.մ

Գծապատկերի տեսքով արտացոլենք վերը նշվածը:

Այլ համապարփակ ֆինանսական արդյունք



Գծապատկեր 2. Հիմնական միջոցների վերագնահատումից նվազման արտացոլում (աճը ճանաչելուց հետո) Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և Շահույթում կամ վնասում ¹

2. Ենթադրենք ակտիվի հաշվեկշռային արժեքը առաջին վերագնահատման հետևանքով նվազում է 500 պ.մ-ով: Նվազումը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում՝

¹ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից

Դտ 7241 “Հիմնական միջոցների վերագն. կորուստներ”	500 պ.մ
Կտ 111 “Մաշվող հիմնական միջոցներ”	500 պ.մ
Դտ 331 “Շահույթ կամ վնաս”	500 պ.մ
Կտ 7241 “Հիմնական միջոցների վերագն.կորուստներ”	500 պ.մ

Եթե նույն ակտիվի արժեքը հաջորդ վերագնահատման ժամանակ բարձրանա 1200 պ.մ-ով, ապա նախորդ վերագնահատման հետևանքով ճանաչված կորուստը (500 պ.մ) պետք է ճանաչել օգուտ և տեղափոխել շահույթ կամ վնաս: Մնացած մասը պետք է կրեդիտագրել “Հիմնական միջոցների վերագնահատումից օգուտներ” հաշվում: Կտրվեն հետևյալ հաշվապահական ձևակերպումները.


Դտ 111 “Մաշվող հիմնական միջոցներ”	1200 պ.մ
Կտ 6241 “Հիմնական միջոցների վերագն. օգուտներ”	500 պ.մ

Կտ 6711 “Հիմնական միջոցների վերագն. օգուտներ”	700 պ.մ
Դտ 6711 “Հիմնական միջոցների վերագն օգուտներ”	700 պ.մ
Կտ 3211 “Հիմնական միջոցների վերագն. արժեքի ած	700 պ.մ
Դտ 6241 “Հիմնական միջոցների վերագն.օգուտներ”	500 պ.մ

Կտ 331 “Շահույթ կամ վնաս”	500 պ.մ
---------------------------	---------

Ներկայացնենք վերը նշվածը գծապատկերի տեսքով.

Այլ համապարփակ ֆինանսական արդյունք



Շահույթ կամ վնաս

Գծապատկեր 3. Հիմնական միջոցների վերագնահատումից աճի արտացոլում (նվազումը ճանաչվելուց հետո) Շահույթում կամ վնասում և Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ¹

Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճը, որը ներառված էր սեփական կապիտալում, կարող է ուղղակիորեն վերագրվել չբաշխված շահույթին, երբ ակտիվները ապաճանաչվում են: Վերագնահատումից արժեքի աճի ամբողջի վերագրումը չբաշխված շահույթին կարող է տեղի ունենալ, երբ ակտիվը դուրս է գրվում կամ օտարվում է: Այնուամենայնիվ, վերագնահատումից արժեքի աճի որոշ մասը կարող է նաև վերագրվել չբաշխված շահույթին՝ կազմակերպության կողմից ակտիվի օգտագործմանը զուգընթաց: ²

Այսպիսով, հիմնական միջոցների ճիշտ հաշվառումը և ճանաչելուց հետո վերագնահատման արդյունքում դրանց իրական արժեքով չափումը ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին ապահովում են արժանահավատ տեղեկատվությամբ կազմակերպության ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների վերաբերյալ, ինչպես նաև հնարավորություն են տալիս նրանց տեղեկատվություն ստանալու կազմակերպության կողմից հիմնական միջոցներում կատարած ներդրումների և այդ ներդրումներում տեղի ունեցող փոփոխությունների մասին:

ԱՄՓՈՓՈՒՄ

Կազմակերպությունների հիմնական միջոցների վերագնահատումը թույլ է տալիս հաշվապահական հաշվառման մեջ արտացոլված դրանց արժեքներն համապատասխանեցնել իրենց իրական արժեքներին, ինչն էլ, իր հերթին, ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների բոլոր խմբերին ապահովում է կազմակերպության ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների վերաբերյալ արժանահավատ տեղեկատվությամբ: Հոդվածում ներկայացվել են հիմնական

¹ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից

² ՀՀՄՍ 16 “Հիմնական միջոցներ” պ.41

միջոցների վերագնահատման հաշվառման մոտեցումները համաձայն ՀՀՄ 16 “Հիմնական միջոցներ” ստանդարտի:

Зурабян К.А.

Ереванский государственный университет, к.э.н., доцент

ВОПРОСЫ УЧЕТА ПЕРЕОЦЕНКИ ОСНОВНЫХ СРЕДСТВ

Ключевые слова: переоценка, основные средства, прибыль или убыток, прочий совокупный доход, прирост стоимости от переоценки.

РЕЗЮМЕ

Переоценка основных средств организаций позволяет оценить стоимость этих средств в соответствии с их справедливой стоимостью, что, в свою очередь, предоставляет достоверную информацию всем пользователям финансовой отчетности о финансовом положении и результатах финансовой деятельности организаций. В статье представлен подход к учету переоценки основных средств в соответствии с МСФО 16 “Основные средства”.

Zurabyan K.A.

Yerevan State University, Ph.d., Associate Professor

ISSUES IN ACCOUNTING FOR PROPERTY, PLANT AND EQUIPMENT REVALUATION

Key words: revaluation, property, plant, equipment, profit or loss, other comprehensive income, revaluation surplus.

ABSTRACT

Revaluation of entity’s property, plant and equipment allows to align their carrying amounts with its fair value, which in turn provide all users of the financial statements with reliable

information regarding entity's financial position, financial performance. This article presents accounting treatment for property, plant and equipment revaluation in accordance with IAS 16 "Property, Plant and Equipment".

Ղուկասյան Գ.Մ.

Երևանի պետական համալսարան,
Հաշվապահության Ուսուցման Միջազգային Կենտրոն,
Ֆ.մ.գ.թ., դոցենտ,
gayaneghukasyan@mail.ru

Մարուխյան Վ.Մ.

Երևանի պետական համալսարան, հայցորդ
vmarukhyan@yahoo.com

**ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՕՂՏԻՄԱԼ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ
ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ՏԵՄԱՆԿՑՈՒՆԻՑ**

Հիմնաբաներ. մատակարարների ընտրում, մատակարարման շղթայի համակարգում, ոչ գծային ամբողջաթիվ ծրագրում:

Մատակարարման շղթայի կառավարման (ՄՇԿ) առանցքային խնդիրն է ստեղծել կառավարման այնպիսի մեխանիզմ, որի դեպքում համակարգի արդյունավետությունը կլինի առավելագույնը ՄՇ-ի բոլոր մասնակիցների համար:

Ապրանքի արժեքն իր մեջ ներառում է ոչ միայն արտադրական ծախսերը, այլ նաև մարքեթինգի, ծառայությունների, մատակարարման հետ կապված ծախսերը: Հետևաբար, արտադրողները պետք է համագործակցեն մատակարարների հետ նվազագույն ծախսերով առավելագույն արդյունավետություն ապահովելու համար՝ միաժամանակ բավարարելով նաև հաճախորդների պահանջները:

Մատակարարի ընտրության մի շարք մոդելներ դիտարկում և օպտիմալացնում են միայն գնորդի նպատակները և չեն քննարկում այդ քաղաքականության ազդեցությունը մատակարարների վարքի վրա: Սույն հոդվածում դիտարկվում